



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church

of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սր Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office e.info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

19th June 2016

Bulletin No 26/16

ՀՈՌՄԷԱՅԻՍ 8.31-10.4

Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն մասին. եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ հակառակ է մեզի: Ա՛ն՝ որ չխնայեց իր իսկ Որդիին, հապա մատնեց զայն մեր բոլորին համար, ի՞նչպէս անոր հետ նաեւ պիտի չպարգեւէ մեզի բոլոր բաները: Ո՞վ պիտի մեղադրէ Աստուծոյ ընտրածները. Աստուած է արդարացնողը: Ուրեմն ո՞վ է դատապարտողը. Քրիստոս՝ որ մեռաւ, մա՛նաւանդ յարութիւն առաւ եւ Աստուծոյ աջ կողմն է, ա՛ն կը բարեխօսէ մեզի համար: Ուրեմն ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսի սէրէն. տառապա՛նքը, կամ տագնա՛պը, կամ հալածա՛նքը, կամ սո՛վը, կամ մերկութի՛ւնը, կամ վտա՛նգը, կամ սո՛ւրը:

(Ինչպէս գրուած է. «Քեզի՛ համար ամբողջ օրը կը մեռցուինք. սպանդանոցի ոչխարի պէս կը սեպուինք»):

Նոյնիսկ այս բոլոր բաներուն մէջ աւելի քան յաղթող կըլլանք անո՛վ՝ որ սիրեց մեզ: Որովհետեւ եւս համոզուած եմ թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ զօրութիւնները, ո՛չ ներկայ բաները, ո՛չ գալիք բաները, ո՛չ բարձրութիւնը, ո՛չ խորունկութիւնը, ո՛չ ալ ոեւէ ուրիշ արարած պիտի կարենայ զատել մեզ Աստուծոյ սէրէն, որ Քրիստոս Յիսուսով՝ մեր Տէրջմով է:

Ճշմարտութիւնը կըսեմ Քրիստոսով ու չեմ ստեր, (իմ խղճմտանքս ալ կը վկայէ ինծի Սուրբ Հոգիով.) թէ մեծ տրտմութիւն ունիմ, եւ սիրտիս մէջ՝ յարատեւ ցաւ: Քանի որ կըղձայի եւ ինքս նգովուած ըլլալ Քրիստոսէ, իմ եղբայրներուս՝ մարմինի կողմէն ազգականներուս համար, որոնք Իսրայէլացի են: Անո՛նցն են որդեգրութիւնը, փառքը, ուխտերը, օրէնսդրութիւնը, պաշտամունքն ու խոստումները: Իրե՛նցն են նախահայրերը. իրենցմէ՛ ալ մարմինի կողմէն եկաւ Քրիստոս, որ բոլորին վրայ է, յաւիտեան օրինեալ Աստուած: Ամէն:

Բայց Աստուծոյ խօսքը ապարդիւն նկատուելու չէ. քանի որ բոլոր Իսրայէլէ եղողները Իսրայէլացի չեն, ո՛չ ալ բոլորը զաւակներ են՝ քանի որ Աբրահամի զարմն են. հապա ըսուեցաւ. «Իսահակի՛ անունով պիտի կոչուի քու զարմը»: Այսինքն անոնք որ մարմինի զաւակներն են՝ Աստուծոյ զաւակները չեն. հապա խոստումի՛ն զաւակները զարմ կը սեպուին: Որովհետեւ խոստումին խօսքը սա՛ էր. «Այս ատեն՝ պիտի գամ, ու Մառա որդի մը պիտի ունենայ»: Եւ ո՛չ միայն այդ, այլ նաեւ երբ Ռեբեկա յղացաւ մէկէն՝ մեր Իսահակ հօրմէն, (քանի որ զաւակները դեռ չծնած, ո՛չ ալ որեւէ բարիք կամ չարիք գործած, որպէսզի Աստուծոյ առաջադրութիւնը հաստատ մնայ՝ ընտրութեան համաձայն, այսինքն ո՛չ թէ գործերէն ըլլայ, հապա անկէ՛ որ կանչեց,) անոր ըսուեցաւ. «Երեցը պիտի ծառայէ կրտսերին», ինչպէս գրուած է. «Յակոբը սիրեցի, իսկ Եսաւը ատեցի»:

Ուրեմն ի՞նչ ըսենք. միթէ Աստուծոյ քով անիրաւութի՛ւն կայ: Ամէ՛նեին: Որովհետեւ ան Մովսէսի կըսէ. «Անո՛ր որ պիտի ողորմիմ՝ կողորմիմ, եւ անո՛ր վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ»: Ուրեմն ո՛չ մարդուն ուզելէն, ո՛չ ալ վազելէն՝ կախեալ է, հապա Աստուծմէ՛ որ կողորմի: Քանի որ Գիրքը կըսէ Փարաւոնի. «Բարձրացուցի քեզ, որպէսզի իմ զօրութիւնս ցոյց տամ քու միջոցովդ, եւ իմ անունս հռչակուի ամբողջ երկրին մէջ»: Ուրեմն կողորմի որո՞ւն որ ուզէ, եւ կը խստացնէ զա՛յն որ ուզէ:

Հետեւաբար դուն պիտի ըսես ինծի թէ՛ «ա՛լ ինչո՞ւ կը մեղադրէ, որովհետեւ ո՛վ կրնայ ընդդիմանալ անոր ծրագիրին»: Բայց դուն ո՛վ ես, ո՛վ մարդ, որ կը դիմադարձես Աստուծոյ: Միթէ կերտուած ը կրնա՞յ ըսել զինք կերտողին. «Ինչո՞ւ ա՛յսպէս շինեցիր զիս»: Միթէ բրուտը իրաւասութիւն չունի՞ կաւին վրայ, որ նոյն զանգուածէն շինէ անօթ մը՝ պատիւի համար, իսկ ուրիշ մը՝ անպատուութեան համար:

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

Ի՞նչ կրնանք ըսել՝ եթե Աստուած, ուզելով ցոյց տալ իր բարկութիւնը եւ գիտցնել իր զօրութիւնը, շատ համբերատարութեամբ տոկաց կորսուելու պատրաստուած բարկութեան անօթներուն, որպէսզի գիտցնէ իր փառքին ճոխութիւնը՝ ողորմութիւն գտնող անօթներուն, որ նախապէս պատրաստեց փառքի համար, այսինքն՝ մեզի, որ կանչեց ո՛չ միայն Հրեաներէն, այլ նաեւ հեթանոսներէն, ինչպէս Ովսէի մէջ ալ կ'ըսէ. «Իմ ժողովուրդս չեղողը՝ “իմ ժողովուրդս” պիտի կոչեմ, ու սիրելի չեղողը՝ “սիրելի”»:

Եւ այն տեղը՝ ուր անոնց ըսուած էր. “Դուք իմ ժողովուրդս չէք”, հոն անոնք պիտի կոչուին “ապրող Աստուծոյ որդիները”:

Եսայի ալ Իսրայելի մասին կաղաղակէ. «Նոյնիսկ եթէ Իսրայելի որդիներուն թիւը ծովու աւազին չափ ըլլայ, միայն մնացորդ մը պիտի փրկուի: Քանի որ ան պիտի կատարէ իր խօսքը, կտրուկ կերպով եւ արդարութեամբ. Տէրը կտրուկ կերպով պիտի իրագործէ իր խօսքը երկրի վրայ»:

Եւ ինչպէս Եսայի նախապէս ըսաւ. «Եթէ զօրքերու Տէրը զարմ մը թողուցած չըլլար մեզի, մենք պիտի ըլլայինք Սողոմի պէս, ու պիտի նմանէինք Գոմորի»:

Ուրեմն ի՞նչ ըսենք: Հետեւեալը, թէ հեթանոսները՝ որոնք հետամուտ չէին արդարութեան՝ հասան արդարութեան, ա՛յն արդարութեան՝ որ հաւատքէն է. իսկ Իսրայել՝ որ հետամուտ էր արդարութեան Օրէնքին՝ չհասաւ արդարութեան Օրէնքին: Ինչո՞ւ. որովհետեւ ուզեց արդարանալ ո՛չ թէ հաւատքով, հապա որպէս թէ Օրէնքին գործերով: Արդարեւ անոնք գայթեցան սայթաքումի քարին վրայ, ինչպէս գրուած է. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ սայթաքումի քար մը ու գայթակղութեան ժայռ մը, եւ ո՛վ որ հաւատայ անոր՝ ամօթահար պիտի չըլլայ»: Եղբայրներ, սիրտիս բաղձանքն է, նաեւ Աստուծոյ ուղղած աղերսանքս՝ Իսրայելի համար, որ անոնք փրկուին: Որովհետեւ ես անոնց համար կը վկայեմ թէ նախանձախնդրութիւն ունին Աստուծոյ հանդէպ, բայց ո՛չ թէ գիտակցութեամբ: Քանի որ՝ անգիտանալով Աստուծոյ արդարութիւնը եւ ջանալով հաստատել իրե՛նց արդարութիւնը՝ անոնք չհպատակեցան Աստուծոյ արդարութեան: Որովհետեւ Քրիստո՛ս է Օրէնքին վախճանը՝ ամէն հաւատացեալի արդարութեան համար:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 13.24-30

Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց ու ըսաւ. «Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ լաւ սերմ ցանեց: Մինչ մարդիկ կը քնանային՝ իր թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ խոտը ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այն ատեն որոմն ալ երեւցաւ: Ուստի հողատիրոջ ծառաները մօտեցան եւ ըսին անոր. “Տէ՛ր, դուն լաւ սերմ չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրեմն որոմը ուրկէ՞ է”: Ան ալ ըսաւ անոնց. “Թշնամի մը ըրած է ասիկա”: Ծառաները ըսին իրեն. “Ուստի կ'ուզե՞ս որ երթանք ու քաղենք զանոնք”: Իսկ ան ըսաւ. “Ո՛չ, որպէսզի երբ որոմը քաղէք՝ ցորենն ալ չփրցնէք անոր հետ: Թո՛ղ տուէք որ երկուքն ալ միասին աճին՝ մինչեւ հունձքի ատենը”: Եւ հունձքի ատենը պիտի ըսեմ հնձողներուն. “Նախ որո՛մը քաղեցէք ու խուրձ-խուրձ կապեցէ՛ք՝ այրելու համար, իսկ ցորենը ժողվեցէ՛ք իմ ամբարս”»:

MATTHEW 13.24-30

Jesus told them another parable: “The kingdom of heaven is like a man who sowed good seed in his field. But while everyone was sleeping, his enemy came and sowed weeds among the wheat, and went away. When the wheat sprouted and formed heads, then the weeds also appeared. “The owner’s servants came to him and said, ‘Sir, didn’t you sow good seed in your field? Where then did the weeds come from?’ ‘An enemy did this,’ he replied. “The servants asked him, ‘Do you want us to go and pull them up?’ ‘No,’ he answered, ‘because while you are pulling the weeds, you may uproot the wheat with them. Let both grow together until the harvest. At that time I will tell the harvesters: First collect the weeds and tie them in bundles to be burned; then gather the wheat and bring it into my barn.’ ”

3: List of the Feasts celebrated in the Armenian church

ՅԻՍՈՒՍ ԻՆՔՆ ԿՈՒ ՏԱՅ ՈՐՈՄՆԵՐՈՒ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

(Օրուայ աւետարանական ընթերցուածին բացատրութիւնը)

Այն ատեն Յիսուս արձակեց բազմութիւնը, ու տուն գնաց: Իր աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին. «Բացատրէ՛ մեզի արտին որոմներուն առակը»: Ինք ալ պատասխանեց անոնց. «Լաւ սերմը ցանողը՝ մարդու Որդին է, արտը՝ աշխարհն է: Լաւ սերմը թագաւորութեան որդիներն են, բայց որոմը չարին որդիներն են: Թշնամին որ ցանեց զայն՝ Չարախօսն է, հունձքը՝ աշխարհի վախճանն է, եւ հնձողները՝ հրեշտակներն են: Ուրեմն ի՛նչպէս որ որոմը կը քաղուի ու կ'այրուի կրակի մէջ, ա՛յնպէս պիտի ըլլայ այս աշխարհի վախճանին: Մարդու Որդին պիտի ղրկէ իր հրեշտակները, եւ պիտի հաւաքեն իր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւններն ու անօրէնութիւն գործողները, եւ պիտի նետեն զանոնք կրակի հնոցին մէջ. հոն պիտի ըլլայ լաց ու ակռաներու կրճտում: Այն ատեն արդարները պիտի փայլին արեւի պէս՝ իրենց Հօր թագաւորութեան մէջ: Ա՛ն որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

Տօն Սբ. Աստուածածինի տուփի գիւտի

Աւանդութեան համաձայն՝ Սբ. Աստածածինի տուփը, ուր պահվեր է Տիրամայրին գլխանոցը, յայտնաբերած են երկու յոյն իշխաններ, որոնք Երուսաղէմ ուխտի գացած ատենին Գալիլիա հրեայ կնօջ մօտ կը տեսնեն տուփը, որու զօրութեամբ հիւանդներ կը բժշկուէին: Տուփը փոխելով անոր կրկնօրինակովը, երիտասարդները զայն կը բերեն Կ. Պօլիս և կը յանձնեն պատրիարքին: Պատրիարքը տուփը կը գետեղէ Սբ. Աստվածածին եկեղեցոյ մէջ եւ կը հաստատէ Սբ. Աստվածածինի տուփի գիւտի տօնը:

Այս տօնը Հայ Առաքելական եկեղեցին սկսած է տօնել 18-րդ դարէն՝ Սիմէօն Երեւանցի Կաթողիկոսի կարգադրութեամբ:



Feast of the Discovery of St. Mary's Box

According to tradition, while on route to Jerusalem on a pilgrimage, two Greek princes come across a chest that once belonged to St. Mary. In Galilee, they see a large crowd gathered in front of a Jewish woman's house. They inquire and find that the sick are being healed due to the inexplicable power of the chest. The princes bring the box to Constantinople and present it to the Patriarch, who places it in the Church of St. Mary. The Patriarch then establishes the Feast of the Discovery of St. Mary's Box.

The Armenian Church celebrates this feast upon the order of the Catholicos Simeon from Yerevan, who accepted this tradition from the Greek Orthodox Church in the late 18th century.

4: Հոգեհանգիստք - Memorial Service

NO MEMORIAL SERVICE REQUEST THIS WEEK

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.



St Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Invitation to join St Yeghiche Choir

At St Yeghiche Armenian Church we are proud of our Church Choir and are continuously looking to expand and improve.

If you like to join our Choir please contact our Choir Master Aris Nadirian on 07890339928 or email your interest to info@styeghiche.org.uk



All Voices are welcomed

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Hokehankist requests, Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, telephone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Please remember our Church in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, and Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".
Alternatively you can arrange your donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to donate £to the St Yeghiche Armenian Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....